ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՆՐԲԵՐԱՆԳՆԵՐ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում բառիմաստային փոփոխությունները զանազանելու խնդիրը բավական բարդ է. դժվար է վստահաբար պնդել, թե բառը նոր իմաստ, իմաստային նոր երանգ է ձեռք բերել, քանի որ ձեռագիր բառարանները չունեն բնագրային օրինակներ: Ուստի և փորձ է արվել հենվելու բառարանային տվյալներին:

Ձեռագիր բառարաններում բառիմաստի փոփոխություն կամ բառի իմաստային նոր երանգ ձեռք բերելը արձանագրվում է գրաբարի[1], միջին (նաև արդի) հայերենի բառարանների համեմատությամբ: Շարադրանքը չծանրաբեռնելու նպատակով չանդրադառնալով իմաստափոխության ենթարկված, լեզվաբանական գրականության մեջ արձանագրված և ձեռագիր բառարաններում հանդիպող բառերին՝ թվարկենք այդպիսիք. անճոռնի, աչխոյժ, արբանեակ, բառացի, դեգերել, թարմատար, համբակ, մարտկոց, պաշտօնեայ, պարետ, պիտակ, ռոճիկ, սերտել[2]:

Արդ առանձնացնենք այն բառերը, որոնք ձեռագիր բառարաններում ունեն իմաստափոխության նշաններ կամ իմաստային նոր երանգ:

Ահագին. *ՆՀԲ-ում վկայված է V դ.՝ «Ահաւոր յոյժ. ահարկու. զարհուրելի. սոսկալի. դժնդակ... Իբր Մեծ և երևելի. ծանր և սաստիկ. բազում. անհնարին» նշանակություններով և մակբայական կիրառությամբ «Ահարկու օրինակաւ. անհնարին սաստկութեամբ. ահաւորութեամբ» (ՆՀԲ, 1, 28): Հանդիպում է Հրաշափառ. հրաշաւոր. սխրալի. ահագին. սոսկալի հոմանշային շարքում[3]: Ահագին բառի՝ «ահարկու, զարհուրելի, սոսկալի» իմաստներով առկայությունը նշված հոմանշային շարքում բացատրվում է ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կազմության սկզբունքով[4],*

---

[1] *Խոսքը վերաբերում է Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). հ. Ա–Բ, Վենետիկ, 1836–1837, Առաջեն բառարան Հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ). Վենետիկ, 1865, Ն. Բ ի ւ զ ա ն դ ա ց ի. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1–5, ԺՆԼ, 1990 բառարաններին:*

[2] *Մանրամասն տե՛ս Ա. Մ ո ւ ր վ ա լ յ ա ն. Հայոց լեզվի բառային կազմը. Երևան, 1955, Է դ. Ա ղ ա յ ա ն. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 1–4, Երևան, 1971, 1973, 1977, 1979, Պ. Բ ե դ ի ր յ ա ն. Իմաստի փոփոխությունները հայերենում (թեկնած. ատենախ.). Երևան, 1955, Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մասին.– Գիտական աշխ.-րի Հայոց լեզվի բաժին N 1, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1965, 120-131:*

[3] *Հոմանշային շարքը ներկայացնելիս որևէ ձեռագիր հիմք չի ընդունվել: Դրանք քաղված են շուրջ 20 ձեռագրերի (Մաշտոցի անվան Մատենադարան՝ ձեռագիր NN 5596, 4612, 4149, 1654, 3937, 5919, 2371, 8198, 530, 7117, 266, 5926, 2335, 8106, 538, 532, 2372, 5126, 3197, 7250) համեմատությամբ:*

[4] *Ն. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հոմանշային շարքը միջինհայերենյան ձեռագիր բառարաններում.– «Պատմա-բանասիրական հանդես», 2001, N 2, էջ 200–203:*

որքանով «հիանալին, յոյժ հիանալին, հրաշալին, սքանչելին» կարող է երկյուղ առաջացնել, ահազդու, ահարկու լինել (հմմտ. ահաւոր բառը նույնպես): Ուրեմն և միջին հայերենում, ելնելով հոմանշային շարքից, թերևս, կարելի է արձանագրել իմաստային զարգացում: Արդի բացատրական բառարաններից ԱՀԲԲ «ահարկու, ահ ազդող» իմաստների համար ունի «հնց.», իսկ ԺՀԼԲԲ՝ «հղվդ.» նշումը՝ հիմնականն արձանագրելով «մեծ, վիթխարի»-ն (ԱՀԲԲ, 19, ԺՀԼԲԲ, 1, 29):

Ահաւոր. ՆՀԲ-ում վկայված է դարձյալ V դ. «Ահարկու. զարհուրելի. ահագին. պատկառելի. ակնածելի. հիանալի. ահեղ. չքեղ. փառաւոր. մեծ» իմաստներով (ՆՀԲ, 1, 29)՝ Հոմանշային շարքն է Անհաս... անպարադրելի... անպարիմանալի. անրմբռնելի. անպարունակելի... վէհ. մեծ. ահաւոր... անբաւելի. անբովանդակելի...:

Ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կազմության սկզբունքով անհասանելի-ն անրմբռնելի է լինում, վերջինս էլ հիացնում է, ազդում, ներգործում... Ուրեմն հավանական են ահաւոր-ի «անրմբռնելի, հիացնող. ազդեցիկ» իմաստները, որ, թերևս, հիմնավորվում, արդարացվում են առօրյա խոսակցականում օգտագործվող ահավոր խելոք, ահավոր սիրուն արտահայտություններով (հմմտ. ահագին բառը. նաև ռուս. ужасно красивый): Արդի բացատրական բառարանները փոխաբերական իմաստով նշում են «խիստ ազդու, հիացք առաջացնող» (ԺՀԼԲԲ, 1, 30), «ծայրահեղ, երկյուղ առաջացնելու չափ, ապշեցնելու չափ» (ԱՀԲԲ, 19):

Անմեկին. ՆՀԲ արձանագրած իմաստներն են «անբացատրելի, անմեկնելի, անբացայայտ» (ՆՀԲ, 1, 202): Բառը հանդիպում է Նենգաժէտ. խորամանկ. հնարաւոր. անմեկին. պատուիրանազանց. յաչաղկոտ. մախացաւղ. նենգաւոր հոմանշային շարքում: Եթե բխեցնելու լինենք ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կառույցից, կարելի է նշել, որ ոչ բացահայտ արվածը (թերևս թաքուն, գաղտնի) և անբացատրելի-ն ներառում են նենգության, խորամանկության ինչ-որը տարբ, երանգ (անշուշտ վերապահությամբ), որքանով անբացահայտ-ն ու անբացատրելի-ն խորհրդավորություն են հաղորդում, այլև թաքցնում են, գաղտնի պահում: Ուստի կարելի է ընդունելի համարել միջինհայերենյան անմեկին-ի «նենգ, խորամանկ» նրբիմաստը: Եր.Մեղրեցին տալիս է «պատուիրանազանց» բացատրությունը[5]:

Գանել. վկայված է V դ. «...ձաղել, ծեծել, խոշտանդել, չարչարել...»՝ միաժամանակ «ձաղել, թշնամանել, պատուհասել կշտամբանօք» իմաստը նշելով XII–XIII դդ. (ՆՀԲ, 1, 529, ՀԱԲ, 1, 514): Միջին գրական հայերենին նվիրված աշխատություններում[6] և Միջին հայերենի բառարանում[7] առկա է «վնասել, վիրավորել» իմաստը: Ձեռագիր բառարաններում հոմանշային շարքն է Լուտալ. պարսաւել. բամբասել. ապագուել. բաբքողել. թշնամանալ. այպանել. քամահրել. նշկահել. անարդել. արհամարհել. գսրովել. աղաւաղել. հիքել. քքել. գանել. նախատել. ձաղել. ձառակոծել. հայհոյել.

---

[5] Ե ր. Մ ե ղ ր ե ց ի. Բառգիրք Հայոց (այսուհետև՝ Բառ. երեմ.). Երևան, 1975, էջ 29:
[6] Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. Ա, Երևան, 1972, էջ 183:
[7] Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն. Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ). հ. Ա, Երևան, 1978, էջ 138:

պախարակել: Այնպես որ և՛ ՆՀԲ, և՛ ՄՀԲ արձանագրած իմաստները մեկ անդամ ևս հաստատվում են հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններով:

Ընդգրկել. դարձյալ վկայված է V դ.՝ «Ի գիրկս առնուլ. գիրկս արկանել. փարիլ. և սիրով ընդունել. գրկել. գիրկը առնել» (ՆՀԲ, 1, 766): Հանդիպում է Պարունակեալ. պարագրեալ. ընդգրկեալ. բովանդակեալ հոմանշային շարքում, որից էլ պարզորոշ է «իր մեջ ամփոփել, պարունակել, ներառնել» նոր իմաստը. այն «փիսբ.» նշումով է ներկայացնում Ատ.Մալխասեանցը[8]: Արդի հայերենում այս իմաստը հիմնականն է[9]:

Հերքել. ՆՀԲ V դ. վկայված այս բայի համար նշում է «....՝ի բաց վարել կամ վանել. հալածել. յաղթահարել. կարող լինել... բաւել, զօրել. տօկալ. ընդդէմ կալ» (ՆՀԲ, 12, 95): Հր. Աճառյանի հավաստմամբ հերքել-ը նոր դրականում ձեռք է բերել «մէկի ասածը մերժել, սխալ լինելը ցոյց տալ» իմաստը (ՀԱԲ, 3, 89): Ձեռագիր բառարաններում Բռնադատել. յաղթել. հերքել. դրդուել. շարժել հոմանշային շարքով ասես հերքել-ը «նախապատրաստում է» բայի ձեռք բերելիք նոր իմաստը. եթե հաղթում ես, ուրեմն ճիշտ ես, հետևաբար սխալ է դիմացինը (անշուշտ, դարձյալ վերապահությամբ): Բառ. երեմ. նշում է «յաղթել, կամ հալածել, կամ վնասել» (Բառ. երեմ., 185): «Յաղթել» իմաստն է առանձնացնում նաև ԱԲ (ԱԲ, 494):

Հնարաւոր. ՆՀԲ «Հնարող. ճարտարող. կարող. ձեռնհաս. ճարտար. հնարագիտ. հնարագիր. մեքենագործ. Տ. հնարագէտ» իմաստը (ՆՀԲ, 2, 106-107) միջինհայերենյան ձեռագիր բառարաններում ձեռք է բերել բացասական երանգ՝ Նենգաժէտ. խորամանկ. հնարաւոր. անմէկին. պատուիրանագանց. յաչաղկոտ. մախացաւղ. նենգաւոր: Արդի հայերենում հնարագիտությունը, առավել ևս մեքենայությունը ստացել են փոքր-ինչ բացասական (վերջինս միայն բացասական. տե՛ս ԱՀԲԲ, 1003, ԺՀԼԲԲ, 3, 525) երանգ՝ ի հակադրություն գրաբարյան վարպետության, ճարտարության, արվեստի (հատկապես պատերազմական. հմմտ. ՆՀԲ, 2, 106, 257-258, ԱԲ, 499): Ենթադրելի է՝ հնարամիտ- հնարագետ- հնար գտնողը խորամանկ էլ պետք է լինի (ուրեմն նաև նենգ. տե՛ս Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» Խորամանկ բառահոդվածը)[10], մանավանդ եթե հնար չունի, և հույսը կտրվել է (հմմտ. ճար անել, ճար(ը) գտնել//կտրել, ճար չկա, ճարս ինչ գարձվածքները[11]): Հավելենք նաև, որ ՀԼՀԲ-ում հնարագետ և ճարպիկ դլխաբառերով հոմանշային շարքերում առկա է կախարդ բառը (հոմանիշ՝ խարդախ, խաբեբա), իսկ հնարամիտ-ով հոմանշային շարքում՝ խորամանկ-ը, այլև բարբառներում օգտագործվող սատանա-ն (ՀԼՀԲ, 297, 392, 422. հմմտ. սատանի ճուտ, սատանի պոչ, սատանա խաբող և այլ

---

[8] Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ). հ. 2, Երևան, 1944, էջ 54:

[9] Է դ. Ա ղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ). Երևան, 1976, էջ 400: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ). հ. 2, Երևան, 1972, էջ 93:

[10] Ա. Ս ո ւ ք ի ա ս յ ա ն. Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ). Երևան, 1967, էջ 272:

[11] Ա. Ս ո ւ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան. Երևան, 1975, էջ 401–402:

դարձվածքներ[12]): Ուստի և ընդունելի է հնարաւոր բառի՝ միջինհայերենյան «նենգ, խորամանկ, խարդախ» իմաստը:

Արդի բացատրական բառարանները պահպանել են ՆՀԲ նշած «կարելի, հավանական, թույլատրելի» երկրորդական իմաստները (տե՛ս ԱՀԲԲ, 879, ԺՀԼԲԲ, 3, 361):

Հոլովեալ. հոմանշային շարքն է Կորացեալ. ընկճեալ. հոլովեալ. ընկեցեալ. շրջեալ. զիջեալ. քահեալ. կորակնեալ: ՆՀԲ «Գլել. գլորել. թաւալել. շրջել. իրօք կամ նմանութեամբ. փոփոխել. յեղյեղել. բոլորել. դալարել. կուտել» նշանակություններից բացի հղում է նաև Աթանաս Ալեքսանդրացու ճառերին և Ներսես Լամբրոնացու մեկնություններին՝ առաջինում արձանագրելով հունական ոճ՝ «անկցին» («Առաջի նորա հոլովեսցին եթովպացիք»), երկրորդում՝ ռամկական՝ «իբր ռմկ. ընկած, ձգած» («Ծերն հոլովեալ է և զառանցեալ». ՆՀԲ, 1, 115): Ձեռագիր բառարաններում ակնհայտ է փոխաբերական «ընկճված, կյանքի հատակն ընկած, գլորված» իմաստը[13]:

Ճիշտ նույն, հավանական և ընդունելի իմաստային անցումն է դիտվում և ՆՀԲ վկայությամբ IX դ. հիշատակվող Կորակնեալ բայի դեպքում[14]. տե՛ս վերը նշված Կորացեալ-ով սկսվող հոմանշային շարքը:

Ցանկ(գ)ել. հանդիպում է Անջատել. որոշել. տարամերժել. քեցել. տրոհել. զատել. հերքել. տարբերել. տրամատել. պեղել. քակել. մեկնել ... բաժանել. մեկուսել. ՛ի կողմ հանել. ցանգել. յրաժարել. քակտել. քերքել. մղել ... աւոլոց ելանել. հանել. ՛ի բաց առաքել հոմանշային շարքում: V դ. վկայված ցանկել (ցանգել)-ը ՆՀԲ բացատրում է իբրև «ցանկասլատել, պարսպել, ամրացուցանել» (ՆՀԲ, 2, 909): Բնականաբար «ցանկապատել, պարսպել»-ը ենթադրում է անջատում, տրոհում, բաժանում: Ուրեմն և ընդունելի է միջին հայերենում հոմանշային շարքից առանձնացված ցանկել-ը՝ «անջատել, զատել, մեկուսացնել» նրբիմաստով:

Հոմանշային շարքեր ձևավորած բառերը վկայում են, որ պահպանվել են մեծ մասամբ գրաբարյան բառարաններում նշված իմաստները. դրանց մեծ մասը արդի հայերենի բացատրական բառարանները արձանագրում են «հնց.», «հին», «գրք.» նշումներով, ինչպես՝ խնդրել «որոնել, փնտրել»,[15] յամրանալ «ուշանալ, դանդաղել» (հմմտ. համրընթաց, համրաքայլ), խուզել «քննել, հետաղոտել» (հմմտ. քննախույզ, հետախույզ), գայթակղել «գայթեցնել», թուլամորթել «թուլամորթ դառնալ» և այլն:

Բառարանային պրպտումներն ու դիտարկումները հնարավորություն ընձեռեցին առանձնացնելու նաև ժամանակակից հայոց լեզվում իմաստափոխության ենթարկված կամ իմաստային փոքր-ինչ այլ երանգ ստացած բառերը:

---

[12] Նույն տեղում, էջ 514–517:

[13] Ա. Մուրվալյանն առանձնացնում է հոլովել-ը՝ նշելով «բառիմաստի մասնագիտական տարբերակում» (Ա. Մ ո ւ ր վ ա լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 112):

[14] ՆՀԲ արձանագրում է Կորակնեալ. որ և Ակնկորել. Զակն ՛ի վայր կորացուցանել. լի լինել ամօթով. նկուն լինել (ՆՀԲ, 1, 1118):

[15] Էդ. Աղայանը արդի հայերենում այս բառի համար նկատում է իմաստի փոխհաջորդում (Է դ. Ա ղ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 106):

Արտադրել. հանդիպում է Ասել. ոգել. պատմել. թուել. ձայնել. ճառել. առադրել. արտադրել. արտասանել. վիպել... հոմանշային շարքում: ՆՀԲ առաջին հերթին նշում է «Որպես բացադրել, և բացատրել. առաջի դնել. ճառել. մեկնել. վճռել. յայտ առնել...» (ՆՀԲ, 1, 376): Եր.Մեղրեցին ունի «յանձնէ ի բաց մերժել. կամ ի վեր երեւել կամ հոսել» բացատրությունները (Բառ. երեմ. 40): Բառը ՆՀԲ արձանագրած իմաստով, թեև «հին» նշումով է առանձնացրել Ստ.Մալխասեանցը (ՀԲԲ, 1, 281): Արդի հայերենում այս իմաստը չկա. առկա են «հեղինակել, ստեղծագործել» և «փխբ.» նշումով «ստեղծել, ծնել» իմաստները (ԱՀԲԲ, 142, ԺՀԼԲԲ, 1, 242):

Իրաւարար. հոմանշային շարքն է Տէր. դատաւոր. իրաւարար. քննաւղ: ՆՀԲ բացատրում է «Որ առնէ իրաւունս դատարանաւ. արդար դատաւոր» (ՆՀԲ, 1, 872): Արդի բացատրական բառարանները իրավարար (այսինքն՝ արդար դատավոր) համարում են միայն միջնորդ (արբիտր) և հաշտարար դատավորներին՝ «արդարադատ»-ը նշելով «հնց.», «հին» (հմմտ. ՀԲԲ, 2, 174, ԱՀԲԲ, 508, ԺՀԼԲԲ, 2, 361)՝ ի հակադրություն գրաբարում արձանագրված ընդհանրապես արդար և անարդար դատավորների: ՄՀԲ ունի իրաւաբեր բառը «իրաւունք և արդարութիւն բերող՝ անող, իրաւարար» (ՄՀԲ, Ա, 294), իսկ Հր. Աճառյանի հավաստմամբ «Իրաւ իբր ուղ. դոյական ըմբռնուելուց յետոյ՝ տուել է նորանոր ածանցներ... իրաւունք, իրաւարար. իրաւացի...» (ՀԱԲ, 2, 250, հմմտ. նաև իրաւարար և իրաւասեր բառահոդվածները, ՀԼՀԲ, 238): Փաստորեն արդի հայերենում (ըստ բացատրական բառարանների) իրավարար-արդարադատ են համարվում միայն հաշտարար և միջնորդ դատավորները: Ուրեմն, թերևս, առկա է իմաստային տարբերակում:

Խոշոր. հոմանշային շարքն է Խոշոր. կարծր. ննդիմահար. յաստատուն. սլինդ. անշարժ: ՆՀԲ խոշոր-ը բացատրում է «անողորկ. կոշտ. անհարթ ... հաստ. խիստ և կարծր...» (ՆՀԲ, 1, 964): Բառ. երեմ. «խոշոր-կարծր» (Բառ. երեմ. 146): ՄՀԲ ունի խոշորնալ, խոշրցնել բայերը՝ իբրև «... կոպիտ՝ հաստ՝ անողորկ դառնալ, գարձնել», իսկ խոշորութիւն բժշկական եղրը՝ «պնդացում, կոշտացում» (ՄՀԲ, Ա, 348): Արդի բացատրական բառարանները վերոնշյալ իմաստները չունեն (ԱՀԲԲ, 594, ԺՀԼԲԲ, 2, 550): Հր. Աճառյանի հավաստումով՝ «Գաւառականների և արդի գրական լեզուի մէջ խոշոր նշանակում է «մեծ, աւելի՝ կոպիտ կերպով մեծ» (ՀԱԲ, 2, 395): Ակնհայտորեն խոշոր, հաստ, կարծր-ը իմաստային զարգացումով հանգել է մեծ-ին[16]: Ժամանակին «կարծր, անշարժ, պինդ» դիտված խոշոր-ը եղել է հաստատուն (հմմտ. հոմանշային շարքը), ուրեմն և դիմադրող, ընդդիմացող, հետևաբար մեծ (հմմտ. большой, крупный, твердый, жесткий և сильный բառերի նշանակությունները հին ռուսերենում)[17]:

Կաշկանդել. ՆՀԲ-ում վկայված է իբրև «Պնդասլես կապել քարշելով... սլրկել, արգելուլ և պնդել անշարժ» (ՆՀԲ, 1, 1052), իսկ ԱԲ-ում՝ «պիրկ կապել՝ կապկպել» (ԱԲ, 422): Հանդիպում է Շարել. հիւսել. յարաշարել. մերձենալ. շազկապել. բեւեռել. ընդ միմեանս միաւորել հոմանշային շար-

[16] Պ. Հեգիրյանը դիտում է բառիմաստի անցում (տե՛ս նշվ. աշխ., էջ 72):

[17] В л. Д а л ь. Толковый словарь живого великорусского языка. Т. 1, М., 1955, с. 113.

քում: Եր. Մեղրեցին ունի «Հանգուցանել» բացատրությունը (Բառ. երեմ. 158): «Ամուր, կապել, կապկպել» իմաստն արձանագրում են և՛ ԱՀԲԲ, և՛ ԺՀԼԲԲ, առաջինը՝ «Հնց.» նշումով (ԱՀԲԲ, 690), վերջինը՝ առանց որևէ նշումի (ԺՀԼԲԲ 3, 49. բնօրինակը՝ Ռաֆֆուց)՝ հիմնական, գլխավոր նշելով «... խոչընդոտել, արգելել» իմաստը. այն կարելի է գիտել իմաստային զարգացման արդյունք, քանի որ ամուր կապ(կսլ)ված, անշարժ ամրացված լինելը սահմանափակում է շարժումները, հնարավորությունները, արգելում դրանք, խոչընդոտում:

Ձեռնածու. Հոմանշային շարքն է Վհուկ. որովայնակոչ. մաղաբովթ. լերդահմայք. ձեռնածուք. գիտնաց. թովչաց: ՆՀԲ, տալով «Դիւթ. վհուկ. կիւս. կախարդող կամ հմայող՝ ածելով և յածելով զձեռս 'ի վեր և 'ի վայր...»՝ բացատրությունը, հավելում է՝ «... 'ի հին բռ. 'ի կարգի փաղանուանց դնին...» և ներկայացնում ձեռագիր բառարանների վերը բերված հոմանշային շարքն առանց վերջին 2 բառերի (ՆՀԲ, 2, 152): Արդի հայերենի բացատրական բառարանները ՆՀԲ նշած իմաստները արձանագրում են «Հնց.»՝ հիմնականը հավաստելով «աճպարար, ծաղրածու», փոխաբերորեն՝ «կամակատար, ստրկամիտ» (ԱՀԲԲ, 919, ԺՀԼԲԲ, 3, 411): Ա. Սուքիասյանը խաբեբա գլխաբառով հոմանշային շարքում հիշատակում է ձեռնածու-ն[18] (տե՛ս նաև Հնարաւոր բառի դեպքում). արդի բացատրական բառարանները չունեն «խաբեբա» բացատրությունը, թեև ԱՀԲԲ ձեռնածություն-ը պարզարանում է իբրև «խաբեություն» (տե՛ս ԱՀԲԲ, նույն տեղում): Ուրեմն և կարելի է արձանագրել իմաստային զարգացում:*

Յաւրինել. Հոմանշային շարքն է Շինել. պատկանել. ցանկ ածել. յաւրինել. յարդարել: ՆՀԲ նշած «Օրինօք՝ ըստ օրինի՝ բարւոք օրինակաւ կազմել. առնել. յարդարել. յերիւել. յարմարել. յօդել. կարգաւորել. ուղղել. տնօրինել. կարգել. յարդարել. յեղանակել. շարադրել. շարադրել» (ՆՀԲ, 2, 382) իմաստները ՀԲԲ արձանագրում է իբրև «Հնց.» (ՀԲԲ, 3, 424): Արդի բացատրական բառարաններից ԺՀԼԲԲ «Հնց.» նշումն ունի միայն «կազմել, կազմակերպել» իմաստի համար (մյուս իմաստներն են «Մի բան ստեղծել, պատրաստել» և «Շարադրել, հեղինակել», ԺՀԼԲԲ, 2, 383), իսկ ԱՀԲԲ որևէ նշում չունի՝ հավելելով, որ հորինել-ը նաև «զարդարել, հարդարել, ձևավորել» է նշանակում (ԱՀԲԲ, 897): Ուրեմն և առկա է իմաստային տարբերակում:*

Մի դիտարկում ևս: Ձեռագիր բառարաններից մի քանիսում նշված հոմանշային շարքն են եզրափակում և սլաճուճել. պճնել. գեղազարդել. գունել. յղկել. զարդարել. գեղեցկացնել բայերը (տե՛ս ձեռագիր NN 5126, 4612, 1654, 5596, 530, 8198(1), 2371[19]. մյուս ձեռագրերում առկա է Շինել-ով և Պաճուճել-ով սկսվող երկու հոմանշային շարք): Թվում է՝ Սա. Մալխասյանցի՝ յօրինել-ի համար «Հնց.» նշումով արձանագրած «զուգել, զարդարել»-ը Էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում առանց որևէ նշումի թյուրիմացաբար զետեղելը բխում է հենց

---

[18] Ա. Սուքիասյան. նշվ. աշխ., էջ 252, 412:

[19] Հ. Ամալյանը ըստ N 2371 ձեռագրի ներկայացնում է բառարանի գլխաբառերը՝ մյուս ձեռագրերի օգնությամբ լրացումներ և մասնակի ճշգրտումներ կատարելով, և նշում է չինել և պաճուճել գլխաբառերով հոմանշային շարքեր (Հ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V–XV դդ.). Երևան, 1966, էջ 131):

այս ձեռագիր բառարանների այս հոմանշային շարքից. հորինել-ը արդի հայերենում դարդարել չէ, ինչպես որ հարդարել-ը ըստ բառարանների այլևս զարդարել չի նշանակում (տե՛ս ԺՀԼԲԲ, 3, 321), ինչպես դարձյալ նշում է ԱՀԲԲ (ԱՀԲԲ, 843):

Պատրուակ. հոմանշային շարքն է Զանխուլ. ծածուկ. անյայտ. առանց գիտելոյ. գաւագէտ. դարանամուտ. սքողեալ. խփեալ. ընդ դրուանաւ. ընդ պատրուակաւ. ընդ վարագուրաւ: ՆՀԲ բառի համար նշում է «Ծածկոյթ երեսաց ... քող ... և Դիմակ... լայնաբար՝ Որպիսի և իցէ ծածկոյթ վերարկիչ. նուարտան. վարագոյր ... նմանութեամբ՝ որպէս Կեղծիք. պատճառանք. առիթ ... (ՆՀԲ, 2, 624, տե՛ս նաև ԱԲ, 688): Հետագա բառարանները մեկնաբանում են նույն կերպ (ՀԲԲ, 4, 475, ՀԱԲ, 4, էջ 54), իսկ արդի հայերենի բացատրական բառարաններում գլխավորն է «մտացածին պատճառ. առիթ»-ը (ԱՀԲԲ, 1199, ԺՀԼԲԲ, 4, 183): Հոմանշային շարքից պարզորոշ է, որ թաքուն, ծածուկ, գաղտնի վիճակը հավասարազոր է ծածկոցի տակ կամ վարագույրի հետևում գտնվելուն, կամ էլ նույնն է թե կեղծ պատճառաբանությամբ իրողությունը թաքցնելուն: Այնպես որ, եթե անտեսվեին հոմանշային շարքում բառին նախորդող և հաջորդող գրուան և վարագոյր բառերը, ապա արդի հայերենի պատրուակը միանդամայն օգտագործելի էր և հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում:

НЮАНСЫ ЗНАЧЕНИЙ СЛОВ В СРЕДНЕАРМЯНСКИХ РУКОПИСНЫХ СЛОВАРЯХ СИНОНИМОВ

НАЗИК ОГАНЕСЯН.

Р е з ю м е

Довольно сложно определить изменения значений слов в среднеармянских рукописных словарях, так как в них нет текстуальных примеров. Поэтому сделана попытка определения этих изменений на основании словарных данных. Выделены слова, которые получили новые значения (*ընդդրկել, հերքել, հնարաւոր* и т.д.), и слова, в значениях которых выявлены некоторые нюансы (*անմեկին, հոլովեալ, ցանկել* и т.д.).